ՆԱԽԱԳԻԾ
Երկրորդ ընթերցում

Պ-364-13.11.2019,15.01.2020-ՖՎ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-239 Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 907-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հաշվարկվում են ավանդը բանկ մուտք լինելու օրվանից մինչեւ այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածում օրացուցային օրերի համար:»:

Հոդված 2. Օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մայիսի 1-ից և տարածվում է այդ օրվանից ներդրվող ավանդի գումարի վրա:

ՆԱԽԱԳԻԾ
Երկրորդ ընթերցում

Պ-364-13.11.2019,15.01.2020-ՖՎ-011

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-239 Հայաստանի Հանրապետությա նքաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 907-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հաշվարկվում են ավանդը բանկ մուտք լինելու օրվանից մինչեւ այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածում օրացուցային օրերի համար:»:

Հոդված 2. Օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ~~մարտի~~ մայիսի 1-ից և տարածվում է այդ օրվանից ներդրվող ավանդի գումարի վրա:՝:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (*Պ-364-13.11.2019-ՖՎ-011/1*) ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ					
N	**ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ**	**ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ**	**ԱՌԱՋԱՐԿԸ**	**ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**	**ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ**
1.	Պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 2-րդ հոդված. «Օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մարտի 1-ից:»	Նախագծի 2-րդ հոդվածում «…մարտի…» բառը փոխարինել «…**մայիսի**…» բառով և **«մայիսի 1-ից»** բառերից հետո ավելացնել հետևյալ բառերը. «**և տարածվում է այդ օրվանից ներդրվող ավանդի գումարի վրա**»:	Ընդունելի է:	Ընդունվել է: